600.0122.14.04.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2021 թվականի №122Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Շիրազի, Մազմանյան, Սիլիկյան, Գ. Չաուշի փողոցների խաչմերուկում, Սարյան 22 փոստատան դիմացի մայթին (Արամի-Բուզանդի փողոցների միջնամասում), Շիրազի փողոցի 26 հասցեի, Խորենացու փողոցի (Էրեբունու ոստիկանության մոտ) և Հասրաթյան փողոցից Սիլիկյան փողոց տանող ճանապարհի վերգետնյա անցումներին, Նալբանդյան-Հանրապետության փողոցների միջև ընկած հատվածում, Մյասնիկյան պողոտայի խաչմերուկում գտնվող՝ Մյասնիկյան-Սարալանջի ստորգետնյա անցման (թունելի), Աբովյան-Մյասնիկյան թունելի վրա տեղադրվող գովազդային միջոցների սպառման համակարգերն (այսուհետ՝ Սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Գալլերի», «Իմիջ Սթայլ», «Արմադա Կո» և «Արտ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների լիազորված անձ Արշակ Արիստակեսյանի (այսուհետ՝ Դիմող անձ)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն (այսուհետ՝ Ընկերություն) ուղղված 2021 թվականի մարտի 1-ի դիմումը,

բ) որ Սպառման համակարգերը Դիմող անձի դիմումի համաձայն միացվում են Ընկերության էլեկտրական ցանցին՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չեն առաջացնում,

գ) որ Երևանի քաղաքապետարանը, համաձայն իր 2021 թվականի մարտի 15-ի №52/28869, №52/28870, №52/28871 և №52/28873 գրությունների (այսուհետ՝ Գրություններ), չի առարկում սույն որոշման «ա» կետում նշված հասցեներում

տեղադրվող գովազդային միջոցների սպառման համակարգերի միացմանն Ընկերության էլեկտրական ցանցին,

դ) Ընկերության 2021 թվականի ապրիլի 2-ի №Ե-83-21 և Դիմող անձի 2021 թվականի մարտի 31-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգերը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով՝ տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Գրությունները:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
14 ապրիլի 2021 թ.